ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

«30» հունիս 2025թ. **N 368**

Կազմակերպության կողմից միայն հյուրանոցային ծառայությունների մատուցման դեպքում ՀՀ Հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 48-րդ կետով սահմանված ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության վերաբերյալ

Հարց

Արդյոք կազմակերպության կողմից օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող հյուրանոցային ծառայությունը ազատվա՞ծ է ավելացված արժեքի հարկից, այն դեպքում երբ հյուրանոցային ծառայությանը զուգահեռ կազմակերպությունը օտարերկրյա զբոսաշրջիկի համար ուղևորություններ, ճանապարհորդություններ, էքսկուրսիաներ չի կազմակերպում, թե՞ ԱԱՀ-ից ազատման արտոնությունից օգտվելու համար անհրաժեշտ է մի քանի զբոսաշրջային ծառայությունների միաժամանակյա մատուցում:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 48-րդ կետին համապատասխան՝ ԱԱՀ-ից ազատվում են օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջության ոլորտի ծառայությունները, ինչպես նաև զբոսաշրջիկային

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

գործակալությունների կողմից մատուցվող գործակալական ծառայությունները, եթե այդ ծառայությունների շրջանակներում ուղևորությունները, ճանապարհորդությունները, էքսկուրսիաներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

Միաժամանակ, «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի՝

- 5-րդ կետին համապատասխան՝ զբոսաշրջությունը ճանաչողական, հանգստի, հարազատներին այցելության, առողջարարական, վերականգնողական, գործնական, կրթական, կրոնական, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, համաժողովների, տոնակատարությունների, ցուցահանդեսների, մշակութային, բնապահպանական, գործառնական նշանակության և այլ բնույթի միջոցառումների մասնակցելու և այլ նպատակներով մինչև մեկ տարի ժամկետով ճանապարհորդությունն է հիմնական կացության վայրից այլ վայր,

- 11-րդ կետին համապատասխան զբոսաշրջային ծառայություններ են՝

ա. ուղևորափոխադրման,

բ. հյուրանոցային,

գ. էքսկուրսային,

դ. ավտոտրանսպորտային միջոցի վարձույթի,

ե. զբոսաշրջիկին մատուցվող կամ առաջարկվող որևէ այլ ծառայություն, որը նույն կետի «ա»-«դ» ենթակետերում նշված ծառայությունների անբաժանելի մաս չի կազմում,

- 12-րդ կետին համապատասխան՝ զբոսաշրջային փաթեթը միևնույն այցելության ընթացքում առնվազն երկու տարբեր տեսակի զբոսաշրջային ծառայությունների համալիր է, եթե զբոսաշրջային ծառայությունները համակցվում են (ներառյալ զբոսաշրջիկի ընտրությամբ) զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտի կողմից նախքան զբոսաշրջային փաթեթի մեկ միասնական պայմանագիր կնքելը, կամ առանձնացված պայմանագրեր կնքելու դեպքում այդ զբոսաշրջային ծառայությունները՝

ա. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության միևնույն սուբյեկտից և համակցվում են մինչև գործարքի վճարման համար համաձայնություն տալը կամ

բ. առաջարկվում, իրացվում են, կամ դրանց դիմաց վճարումը կատարվում է պայմանագրի ամբողջական գնով, իսկ առանձնացված պայմանագրերի դեպքում՝ այդ պայմանագրերի հանրագումարով (ներառական գին), կամ

գ. գովազդվում կամ իրացվում են «զբոսաշրջային փաթեթ» կամ նմանատիպ այլ եզրույթի կիրառմամբ կամ

դ. զբոսաշրջիկի հետ պայմանագիր կնքելուց հետո համակցվում են զբոսաշրջիկի ընտրությամբ կամ

ե. ձեռք են բերվում զբոսաշրջային գործունեության տարբեր սուբյեկտներից միմյանց հետ կապված առցանց ամրագրման ընթացակարգերով, երբ զբոսաշրջիկի հետ առաջին պայմանագիրը կնքած անձի կողմից զբոսաշրջիկի անձնական տվյալները, էլեկտրոնային փոստի հասցեն և վճարման պայմանները փոխանցվում են ծառայություններ մատուցող երրորդ անձանց, իսկ ծառայություններ մատուցող երրորդ անձանց հետ պայմանագրերը կնքվում են առաջին զբոսաշրջային ծառայության ամրագրման հաստատումից հետո՝ 24 ժամվա ընթացքում,

- 13-րդ կետին համապատասխան՝ զբոսաշրջային փաթեթի պայմանագիրը մեկ միասնական կամ առանձնացված պայմանագրեր են, որոնք ներառում են միևնույն այցելության ընթացքում մատուցվող զբոսաշրջային ծառայությունների պայմանները,

- 18-րդ կետին համապատասխան՝ զբոսաշրջային գործունեության սուբյեկտ է համարվում զբոսաշրջային օպերատորը և զբոսաշրջային գործակալը,

- 19-րդ կետին համապատասխան՝ զբոսաշրջային օպերատորը իրավաբանական անձ է, որը ձևավորում և անմիջականորեն կամ զբոսաշրջային գործունեության այլ սուբյեկտի միջոցով կամ, զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի հետ համատեղ հանդես գալով, իրացնում կամ առաջարկում է զբոսաշրջային փաթեթ, տուր կամ այլ առանձին զբոսաշրջային ծառայություններ կամ փոխանցում է զբոսաշրջիկի տվյալները զբոսաշրջային գործունեության մեկ այլ սուբյեկտի՝ համաձայն նույն հոդվածի 12-րդ կետի «ե» ենթակետի,

- 20-րդ կետին համապատասխան՝ զբոսաշրջային գործակալը զբոսաշրջային օպերատոր չհանդիսացող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերն է, որն անհատ զբոսաշրջիկին կամ զբոսաշրջիկների խմբին տրամադրում է զբոսաշրջության հետ կապված խորհրդատվություն կամ առաջարկում կամ վաճառում է զբոսաշրջային օպերատորի ձևավորած զբոսաշրջային փաթեթ կամ առանձին զբոսաշրջային ծառայություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ.

1) օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 48-րդ կետին համապատասխան ԱԱՀ-ից ազատվում են զբոսաշրջային օպերատորի կամ զբոսաշրջային գործակալի կողմից օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող զբոսաշրջային ոլորտի ծառայությունները՝ զբոսաշրջիկներին մատուցվող և նրանց պահանջմունքների բավարարմանն ուղղված ուղևորափոխադրման, հյուրանոցային, էքսկուրսային, ավտոտրանսպորտային միջոցի վարձույթի ծառայություններ և այլ ծառայություններ: Միաժամանակ հայտնում ենք, որ զբոսաշրջային օպերատորի և զբոսաշրջային գործակալի գործունեությունը համարվում են ծանուցման ենթակա գործունեության տեսակներ՝ «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքի 22-րդ հոդվածին համապատասխան,

2) ԱԱՀ վճարող համարվող կազմակերպության կողմից օտարերկրյա զբոսաշրջիկին մատուցվող միայն հյուրանոցային ծառայության մասով օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 48-րդ կետով սահմանված ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառելի չէ և այդ ծառայության մասով հաշվարկվում ու վճարվում է ԱԱՀ՝ օրենսգրքի 4-րդ բաժնով սահմանված ընդհանուր կարգավորումներին համապատասխան:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am